9534

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«20» 06 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0083-22

Ձեռնարկողը՝ ***«Արմենիա վայն» ՍՊԸ***
Արագածոտն, գյուղ Սասունիկ, 30-րդ փող., 1-ին փակուղի, 3 գործարան

Գործունեությունը՝ ***Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա 13/12 հասցեում բիզնես կենտրոնի և ավտոկայանատեղի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ք.Երևան, Ծովակալ Իսակովի պողոտա հ13/12

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0083-22
<20> 06 2022թ.

«Արմենիա վայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված, Երևան քաղաքի, Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա 13/12 հասցեում բիզնես կենտրոնի և ավտոկայանատեղի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Արմենիա վայն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան

Ներածական մաս. Գործունությունը նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի, Ծովակալ Իսակովի պողոտա 13/12 հասցեում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի, ա) ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 ք.մ-ը /նախատեսվող բիզնես կենտրոնի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 6624.4 ք.մ /:

Նախատեսվող բիզնես կենտրոնի նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի դիմումն, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N08042021-01-0282, 0.94964հա /ծածկագիրը՝ 01-006-0708-0056/, Երևանի քաղաքապետարանի կողմից 04.03.2022թ. տրված N 01/18-07/1-Գ-98 ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն): Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի, Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա 13/12 հասցեում:

Ուսումնասիրվող տարածքը տեղադրված է Եղվարդի հրաբխային սարավանդի սահմաններում, Հրազդան գետի աջափնյա հրաբխային բարձրավանդակի վրա, նրա արևմտյան կողմում, տարածքը տեղադրված է լեզվականման բլրի արևելյան ուղղվածության մեղմ անկմամբ լանջերի ստորին մասում: Տեղամասում իրականացված հիմքի ներբանից իրականացված հորատման աշխատանքների ընթացքում մինչև հորատման 20 մետր խորությունը, գրունտային ջրեր չեն բացահայտվել: Համաձայն ֆոնդային նյութերի տվյալների տարածքում ստորգետնյա ջրերը տեղադրված են 30 մետրից խորը:

Բնութագրվող տարածքը գտնվում է արդեն իսկ յուրացված և զարգացած քաղաքային միջավայրում, ուստի տեղանքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, ինչպես նաև բացակայում են տարածքով անցնող միգրացիոն ուղիները և պատմության և մշակույթի հուշարձաններ:

Հողամասի հիմնական մուտքի կապը փողոցային ցանցի հետ Ադմիրալ Իսակովի պողոտայից է: Նախագծով նախատեսվում է նաև միանալ Ամերիկյան եվ Նորագյուղ փողոցներին:

Համալիրը բաղկացաց է երկու մասնաշենքերից՝

- հիմնական գրասենյակային մասնաշենք և ավտոկայանատեղիի մասնաշենք, որը նախատեսված 559 ավտոմեքենայի համար:

Շինարարությունը նախատեսվում է իրականացնել 2 փուլով՝

1-ին փուլ ավտոկայանատեղիի մասնաշենք

2-րդ փուլ հիմնական գրասենյակային մասնաշենք

Ավտոկայանատեղերի մասնաշենքն ունի 2 կիսանկուղային և 6 վերգետնյա հարկեր: Մասնաշենքի յուրաքնչյուր հարկն իրենից ներկայացնում է կես հարկով շեղված երկու հարթակ, որոնք միանում են 4 թեքահարթակներով: Մասնաշենքն ունի 2 մուտք 0.00 և մեկ մուտք -7.50 նիշերից՝ հարկի բարձրությունը 3մ: Նախատեսված են երկու աստիճանավանդակ և երկու վերելակ: Մարդկային հոսքերի ելքը դեպի գրասենյակային մասնաշենք նախատեսված է 0.00 նիշի վրա գտնվող կամրջակով: Մասնաշենքի հարավային ճակատների վրա նախատեսված է արևային պանելների համակարգ:

Գրասենյակային մասնաշենքն ունի երկու կիսանկուղային և 1 նկուղային հարկ, որոնք կծառայեն, որպես ավտոկայատեղ նախատեսված 71 ավտոմեքենայի համար և տեխնիկական նշանակության սենքեր: Մասնաշենքն ունի 15 վերգետնյա հարկ: Առաջին հարկը ծառայում է, որպես հիմնական մուտքային հանգույց, որը կապում է գրասենյակային մասնաշենքը ստորգետնյա ավտոկայանատեղի և առանձին 8 հարկանի ավտոկայանատեղի մասնաշենքի հետ: Առաջին հարկում նախատեսվում է շենքի ընդարձակ նախասրահ (ռեսեպշն) որտեղից վերելակների նախասրահով կազմակերպվում է այցելուների եվ աշխատակիցների մուտքը: Երկրորդից մինչև հինգերորդ և յոթից մինչև տասնհինգերորդ հարկերում նախատեսված են գրասենյակային տարածքներ, վեցերորդ հարկում նախատեսված է մարզասրահ և այգի: Մասնաշենքը սպասարկում են 7 վերելակ եվ 2 աստիճանավանդակ:

ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ՝

Հողի ընդհանուր մակերես՝ 9464.4 քմ;

Կանաչապատման մակերես՝ 2840 ք.մ.;

Կառուցապատման մակերես՝ 6624.4 ք.մ.;

Ավտոկայանատեղերի քանակ՝ 559 հատ:

Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում:

Մասնաշենքը նախատեսված է իրականացնել հավաքովի մետաղական կարկասով: Ֆունդամենտը և ծածկերը երկաթբետոնե, արտաքին երեսապատման նյութ՝ ապակի:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քսայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է տարեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ 150x70x4/1000= 42 տ և շինարարական աղբն է 480 խմ ծավալով: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Բիզնես կենտրոնի էլեկտրամատակարարումը հնարավոր կլինի իրականացնել «Արմենիա Վայն» գործարան ՍՊ ընկերության հաշվեկշռում գտնվող՝ 8777-ի 0.4 կՎ վահանից:

Բիզնես կենտրոնի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը հնարավոր է իրականացնել Իսակովի պողոտայով անցնող d=225 մմ ջրատարից, իսկ կոյուղին հնարավոր է միացնել տարածքի դիմացով անցնող d=250մմ կոյուղատարին:

Գազամատակարարումը Q=200 խմ/ժամ նախատեսվող ծախսով հնարավոր է իրականացնել Երևան ԳԲԿ-4-ը սնող Dպ-500 կողմնատար-գազատարից:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամաբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում և ավտոկայանատեղի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

Տարածքում նախատեսվում է տնկել թխկի սրատերև կարմիր – 15հատ, հուդայածառ – 7հատ, Կատալպա – 8հատ, Դրախտածառ – 11հատ, Ֆորզիցիա - 20հատ, Բարբարիս – 7հատ, Սամշիտ – 65գծմ, Ծաղկանոց -35քմ, Սիզամարգ – 3316.4քմ:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն ամբարան,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկականն միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը,
- շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն,
- անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքն արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:

Բիզնես կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ,
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար,
6. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում,

Կառուցապատման ընթացքում իրականացվող հիմնական բնապահպանական միջոցառումների գումարային արժեքը հաշվարկվում է 1.215.000 հազ. ՀՀ դրամ: Նշված արժեքը ներառում են՝ նախագծման փուլում՝ տեղեկատվության հրապարակման և հանրային ծանուցման, բնապահպանական փորձաքննության համար նախատեսվող ծախսերը:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Առողջապահության», «Արտակարգ իրավիճակների», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից,

Քաղաքաշինության կոմիտեից, Կենտրոն վարչական շրջանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:
Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցություններն, որոնք առընչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Բիզնես կենտրոնի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է՝
- շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
6. Վերջնական նախագծում և շինարարական աշխատանքների ընթացքում հաշվի առնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի, «ՀԷՑ» ՓԲԸ-ի, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի պահանջները:
7. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բիզնես կենտրոնի կառուցման համար նախատեսված հողամասերի գործառնական նշանակությունը կամ հողատեսքը համապատասխանեցնել նախագծի հետ:

8. ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արմենիա վայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված, Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ծովակալ Իսակովի պողոտա h13/12 հասցեում բիզնես կենտրոնի և ավտոկայանատեղի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Ն.Մովսիսյան